

Ար տրանջան եկեղեցականք թէ օր օրի վրայ կրօնական զգացումները կը պաղին ու խտաւորոց թիւը կը պակսին և անհաւատութիւնը յատաջ կել թայ սակայն ի՞նչպէս չըլլան քանի որ ասոնց հեղինակը նոյն ինքն դուք էք, ասանց բնաւ ձեր անձին վրայ ցուցնելու եկեղեցւոյ սրբազան հիօրնականաց աստուածապաշտութեան օրինակը:

Գիտել պէտք է թէ մերիններուն կողմէն երբէք յարձակում եղած չէ այլ միշտ անձի պաշտպանութիւն:

Նոր Գար Որագիր Թ. 1947. Յունվ. 12.

Հետագայ յօդուածոյ մէջ եւս ուշադրութեան արժանի պարբերութիւնք գտնուելով՝ արժան կհամարիմք մեր ընթերցողաց հաղորդել:

Գ Ի Տ Ե Լ Ո Ւ Կ Ա Ր Օ Տ

Ճ Շ Մ Ա Ր Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Մ Ը .

Ազգերնիս այսօր պաշտօնապէս երիբի բաժանալ է. Հայ, Բողոքական և Աթոլիկ. այս ամենքն ալ ազգաւ, արեամբ, լեզուաւ, պատմութեամբ և հայրենիքով Հայ են, սակայն պաշտօնապէս Հայ մեր մասին կը կոչուի, միւսներն իրենց մենէ օտար կրօնքին անուամբ կը ճանցունին, ուստի Հայ բողոքական և կաթոլիկ կոչելնիս ետքի երկու մասը Հայ չէ ըսելու նպատակաւ չէ:

Այս երեք բաժանումն ունի իրեն յատուկ եկեղեցականք, սակայն բողոքական և կաթոլիկը Հայ եկեղեցականներունենակէն զատ՝ ունին նաև միտօնար և լատին եկեղեցականներ՝ որք մեր ազգէն չեն:

Այս աշխարհիս մէջ այն է միշտ մեծ շահ ընողը՝ որ բազմածանօթ է. այս ինքն թէ՛ շատերէ ճանչցուած և շատերու ծանօթ:

Յունաց ազգը արևելքի քաղաքական ամեն ինչորոց մէջ մեծ շահ ունեցած է. վասն զի թէ իրենք աշխարհ և թէ աշխարհ իրենք կը ճանչէ:

Իսկ Հայերը երբէք չէ եղած որ արևելքի քաղաքական ինչորոց մէջ շահ մը հանած ըլլան իրենց վասն զի ոչ զիրենք աշխարհ կը ճանչէ և ոչ իրենք զաշխարհը կը ճամչեն. քիչ մ'աւելի առաջ երթալով կրնամք ըսել թէ՛ Հայոց այս կղզիացիալ վիճակը զիրենք անդիտութեամբ այնպիսի քաղաքականութեանց կոյր գործիք ըրած է որ վերջէն թէև արթնցած են բայց ի՞նչ օգուտ ժամանակն իր վեասակար գործը տեսած է այսպիսի դեպքեր վերջերս ալ պատահեցան որոյ պատճառը մեր պաշտօնական մարդոց աշխարհի ծանօթութիւն չունենալն էր:

Ի վաղուց տրտունջ մը կը լսուէր թէ՛ ինչո՞ւ Եւրոպա մեր խօսքը չընէր սակայն միթէ Եւրոպա՞ պարտական էր լսուտեր ի ձեռն քրիստոնեայ բնաւ աշխարհիս երեսը թէ քրիստոնեայ պարտական էին ինքզինքնին քրիստոնեայ Եւրոպիոյ ճանչցնել:

Եկաւ հաստ մերջերս ժամանակը՝ որ հասկնայ Հայը իր պակասութիւնը և հասկցաւ բայց միջնորդ կը պակսէր զինքը ճանչցնելու:

Կաթոլիկ և բողոքական կղերն իր կրօնքովը և ազգային յարաբերութեամբը ծանօթ էր Եւրոպիոյ ասոնք յարաբերութիւն ունէին Եւրոպիոյ շատ մը եկեղեցականաց, երեսփոխանաց, գրադիտաց և խմբադրաց հետ. ասոնք լաւ ծանօթ էին նաև մեր ամեն վիճակին՝ թէ ընկերական՝ թէ կրօնական՝ թէ սահմանադրական՝ թէ դրական՝ թէ առևտրական՝ թէ արուեստական և թէ երկրագործական, սակայն Եւրոպա չէր դիտեր ասոնց և ոչ մէկը. թէև Եւրոպա երբեմն Նուպար, Ազաթօն, Օտեան և ասոնց նման քաղաքագէտ Հայերու անունը կ'սէր, սակայն ոչ միայն Եւրոպիոյ ընդհանրութիւնը ասոնց Հայ ըլլալը չէր դիտեր, այլ եթէ գիտնար ալ՝ այդ բաւական չէր ազգի մը ընդհանրական հանգամանքը մէկ քանի անհաստներէ հետեցնելու, քանի որ սոսկ ազգային գործի մը մէջ ալ չտեսնուեցան ասոնց տաղանդին փայլը այլ սոսկ քաղաքական պաշտօններու մէջ. հապա՞՛ր դներք նաև ոմանց Հայոց այն վատութիւնը՝ որ իրենց Հայ ըլլալը ճանչցնել ամօթ կը համարէն Եւրոպիոյ առաջը և Գաղղիացի կամ Անգղիացի եմ ըսելով կը պարծէին:

Ահա այս պատճառներով Հայուն անունը անձանօթ մնացած էր Եւրոպիոյ առաջը և քաղաքական նշանակութիւն մը ստած չէ՝ քաղաքակրթեալ աշխարհին համակրանաց արժանի իր բոլոր հանգամանքներովը:

Արդ այս պակասը լեցուցին մենէ ծանր նախատինք կրող միօրոնաբք, մինչդեռ կաթողիկ կղերը իր արդէն ունեցած բոլոր յարարերու թիւումը բռնաւ յօգուտ ազգին գործ մը չբրաւ Եւրոպիոյ հասարակաց կարծեաց առաջը, այլ անհարին լուսութիւն պահեց և դեռ կպահէ:

Մեզ պէտք չէ բնտուել թէ մինըինչ շահ ունի իր ծանօթացնելու և միւսը իր լուսութեանը մէջ, ալ մեզ պէտք եղածը իրողութիւնն է և մեր տեսած շահն է, որուն համար շնորհակալ ըլլալու հնք անոր՝ որ մեզ շահեցուց և մեզ աշխարհի ճանչցնելու միջնորդ եղաւ, իսկ դժգոհ անկէ՛ որ կարողութիւն ունենալով ազգին շահեցնելուն՝ իր լուսութեամբը այդ շահը յառաջ չբերաւ:

Պէտք չէ մոռնալ թէ՛ մեր ակնարկած շահը սոսկ բարոյական է, հասարակաց կարծեաց առջև վատակուած շահն է:

Ասկէ 10 — 20 տարի առաջ կարծիք կար ազգին վերին դասու ոմանց մէջ թէ՛ Եւրոպիոյ համակրանաց արժանի ըլլալու համար և անոր պայտպանութեանը արժանանալու համար Եւրոպական կրօնք մը ընդունելու է, այսինքն բողոքական կամ կաթողիկ ըլլալու է, ասով կը յորդորէին պարզամիտները կրօնափոխութեան զիմարու, խեղճերը չէին գիտեր թէ քաղաքականութեան մը համար կրօնք փոխող մարդը՝ քաղաքակրթութեան առաջը հարգող մը աւելի նուաստ ու ցած էր, սոցալիսեաց դէմ միշտ կրսէինք թէ Եւրոպիոյ համարունը վաղելու համար՝ կաթողիկ կամ բողոքական ըլլալ պէտք չէ, մարդ ըլլալ պէտք է մարդ բարոյական, մարդ ուսեալ և մարդ քաղաքակիրթ, այս հանգամանքները թէ որ ունի՞ հոգ չէ որ քրիստոնեայ ալ եղած չըլլաս, որք Եւրոպիոյ մէջ մենէ շատ աւելի յարդ ունին իրենց հոն բռնած բարձր գրից շնորհիւ:

Եւրոպա իր կրօնքը կը պաշտէ և իրմէ դուրս ամեն կրօնք կը յարդէ, Հայոց ալ սկզբունքը այս

է այսօր շնորհիւ ազատ տպագրութեան և ազգային սահմանադրութեան, այսպէս պէտք է շարունակել նաեւ ասկից վերջը, հաստատամիտ իր կրօնքին վրայ, մանաւանդ անբաժան իր ազգային եկեղեցիէն՝ յարգելով աշխարհի բոլոր կրօնքներն, կրօնք նախատելը կրթեալ մարդու գործ չէ, վայրենիի գործ է, վայրենին ինչ կրօնքէ ալ որ գտանած ըլլայ՝ համակրութիւն չկրնար ստանալ, քաղաքակրթութեանէն մանաւանդ թէ քաղաքականութեան մը և կամ շահու մը համար կրօնք փոխողը վայրենիէն ալ ցած է, զի համոզուած ծախող մէկն է այն՝ որ նախախնամութիւնէն իրեն ազատութեանը յանձնուած ազատ պարզեւր ածուրդի է դրեր շատ տուողին վաճառկու:

Աւտի կվիջացնէք խօսքեր՝ իս կրկնելով այն սկզբունքը թէ՛ պէտք չէ որ և է շահով փոխանակել մեր կրօնքը, պէտք է հաստատամիտ և անբաժան կենալ մեր ազգային եկեղեցւոյն վրայ, պաշտել մեր սուրբ և անարատ կրօնքը, պաշտել մեր սուրբ և անարատ ազգութիւնը՝ յարգելով հանդերձ բոլոր միւս ազգութիւններն ու կրօնքներն և շնորհակալ ըլլալով ամեն անոնց՝ որք մեր ազգը աշխարհի ճանչցնելու չզանգաղեցան:

Նոր դար, Թ. 1944.

